

636.2
F-90

ՀՀ-ի Զարգացման
օրգան. ՀՊՊ

ԿՐ Ը 288

ԹԵ ԻՆՉՊԵՍ
ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ՍՏԻՊԵՅ,
ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ
ՅԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԾՆԻ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Մ Ո Ս Կ Վ Ա

1926

06.03.2013

635-2
P-90

21 SEP 1926

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ Ն. ԲԲԱՌԻԳԵ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ԱՏԻՊԵՑ, ՎՈՐ
Կ Ո Վ Ը
ՏԱՐԻՆ ՅԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԾՆԻ

1007
33692

(Զեռնարկ գլուղացիների համար)



Напечатано в типог. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пиминовская ул.
д. № 16, в количе-
стве 4.000 экз.
Главлит
№ 54310.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ՍՏԻՊԵՅ, ՎՈՐ
ԿՈՎԸ ՏԱՐԻՆ ՅԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԾՆԻ

Վաղուց արդեն հայտնի յե, վոր գերմանա-
ցին ամեն տեսակ հնարքների ընդունակ ե: Յե-
թե այդպես ե, միթե դժվա՞ր բան ե նրա հա-
մար ստիպել, վոր կովը տարին յերկու անգամ
ծնի:

— Եդ ինչպե՞ս կարելի յե ստիպել, — կասի գյու-
ղացին, — վոր կովը տարին յերկու անգամ հոր-
թուկ ծնի: Չե՞ վոր կովն ել ենքան ժամանակ ե
ծանրացած լինում, ինչքան և կինը, իսկ կինը
9 ամիս ծանրացած պիտի լինի: Բայց տարին
12 ամիս ունի, վոչ թե 18: Չե՞, եղտեղ մի ինչ
վոր բան կա:

Ի հարկե կա: Գերմանացու կովն ել տարին
մի անգամ ե հորթ բերում, բայց բանը հորթու-
կը չե, բանն այն ե, վոր հորթ բերելուց հետո
կովը անհամեմատ շատ կաթ ե տալիս, քան թե
հետո:

Գերմանացին իրեն կովերին ստիպել ե, վոր
հորթեր ծնեն աշնանը: Իրա հետևանքն ի՞նչ ե յե-
ղել: Ահա ինչ: — Մեր գյուղացու կովերը գրեթե

բոլորը գարնանն յեն ծնում, իսկ աշնանը նրանք համարյա թե կաթ չեն տալիս: Յե՛վ ձե՛ր գյուղացու ընտանիքը ձմեռը հաճախակի առանց կարի և ձկնու: Նա անհամբեր սպասում է, թե յերբ գարունը կգա, վոր կովը հորթ բերի:

Ճիշտ է, գարնանը մեր գյուղերում, ինչքան ուզենաս, կաթ կա. կովերը ծնելուց հետո առատ կաթ յեն տալիս և, բացի դրանից, գարունն է վրա հասնում, ամենալավ, քնքուշ խոտի լիակատար առատությունն է լինում: Իրիկնապահին կովը լիքը կրծքով է տուն վերադառնում:

Գյուղացին ուրախանում է, ուրախանում յեն և յերեխաները. ձմեռվա յերկարատև պասը վերջացավ, հիմա կարելի յէ մի բո՛ւ կաթ խմել:

Արդո՞ք ոգստվես և գարնան կարի աշրպիսի սուսուրբունը: Վո՛չ, ոգտավետ չէ: Ոգտավետ չէ այն պատճառով, վոր կաթի աղբյուրի առատությունը նրա գինը կոտորում է: Հաճախ գարնանը կաթի գինը այնչափ է ընկնում, վոր կարևանկեսուրբունը բացի վնասից վոյ ձի ոգոս յի տալիս:

Բայց չե՞ վոր քիչ չեն գյուղացիների այնպիսի տնտեսություններ, վորոնք կաթ և յուղ ծախելով յեն ապրում:

Ընդհակառակը, աշնանը կովերի կաթը շատ է պակասում: Թոտը այդ ժամանակ կոշտանուր

է: Արդեն կովերը վեց կամ յոթ ամսվա հղի յեն լինում: Յե՛վ հենց վոր սկսում յեն կովին չոր կեր տալ և գոմը քշել, այն ժամանակ բանը արդեն վատանում է: Գյուղացիների տնտեսության մեջ կովերի գլխավոր կերը դարմանն է: Իրանով բան չի դուրս գալ: Այդ տեսակ կերից կովը հազիվ հազ է վոտի վրա կանգնում, իսկ կաթ նրանից մի՛ սպասիր:

Յե՛վ այդ պատճառով աշնանը կաթի գինը բարձրանում է: Աշնանն ել՝ թե գյուղացին և թե նրա ընտանիքը սկսում են պաս պահել: Ինչ ասել կուզի, վոր յերեխաների վրա այդ շատ վատ է ազդում: Հե՛նց աշո պատճառով ել գյուղացիների յերեխաները ձանձերի պես կոտորվում յեն՝ քախկախալարի կար յունկեսուրբ:

Ըստ յեն վնասում յե՛վ տերտերների հևսուծները: Ուրեմն աշնանը և ձմեռը յերեխաները պաս յեն պահում, կաթ չեն խմում, վորովհետև կաթ չկա: Իսկ գարնանը, յերբ այնքան շատ կաթ կա, տերտերներն յեն խանգարում իրենց հնարածով: Այդ ամիսների համար նրանք մեծ պաս յեն հնարել, վոր այնքան յերկար է տևում: Այդ պատիւ գյուղացիները կաթ չեն խմում, այլ ամեն տեսակ աննշան բաներով յեն կերակրվում: Ի հարկե, այդ կարգն ել ամենից վատ դարձյալ յերեխաների առողջությանն է փաստում:

Տերտերները մոռացել յեն, վոր հենց նրանց ավետարանում պարզ ու վորոշ ասված է. «Ինչ վոր բերանն է մտնում, ա՛յն չէ մարդուն պղծում, այլ ինչ վոր բերանից է դուրս գալիս, ա՛յն է պղծում մարդուն»:

Ուրեմն՝ ինքը ավետարանը ասում է, թե կերակրից մեղք չկա: Իսկ տերտերներն իրենց շահի համար պասեր յեն հորինել և զբանով իսկ ահագին փասս յեն հասցնում խավար, սնահավատ գյուղացիության:

Գերմանական ակադեմիայի անդամ գործը ուրիշ կերպ է դրված: Գերմանացիները վաղուց յեն գլխի ընկել, վոր յերբ կովերը գարնանն յեն ծնում, տնտեսության համար այդ շատ և շատ փաստակար է: Նրանք այնպես են բանը բռնել, վոր նրանց կովերը սկսել յեն աշնանը յե՛վ ձմեռու վա սկզբին հորթ բերել:

Աշնանը հորթ բերելուց ի՞նչ ոգուտ կա:— Ծատ մեծ ոգուտ: Աշնանը մեր գյուղացու կովը մի անգամ կթելիս այնչափ քիչ կաթ է տալիս, վոր նույնիսկ ընտանիքի՛ն կաթը բավական չի լինում, բայց այդ իսկ ժամանակ գերմանացիների կովերի մեծ մասը նոր-նոր միայն հորթ յեն ծնում, և ծնելուց հետո, վորքան ուզում յեն, կաթ յեն տալիս: Յե՛վ վորովհետև աշնանը կաթը անհամեմատ թանգ է լինում, քան գարնանը դ

ամառը, ուստի գերմանացին իր կովերից՝ անհամեմատ ավելի շատ արդյունք է ստանում, քան թե մեր գյուղացին:

Սեպտեմբերին կամ հոկտեմբերին ծնած կովերը գարնան մոտ արդեն մի քանի ամսվա հզի յեն լինում. նրանց կաթը պակասում է: Իսկ հենց վոր գարունը գալիս է և մատղաշ խոտը սկսում է բուսնել— կովերին նրանք դուրս յեն քշում արածելու տեղերը: Յե՛վ գարնանը՝ կակուղ, քնքույշ, թարմ և հյութալից խոտ ուտելուց կովերը նորից շատացնում յեն իրենց կաթը և համարյա թե նույնքան կաթ յեն տալիս, ինչքան աշնանը ծնելուց հետո:

Ուրեմն, աշնանը ծնելու հետևանքով գերմանական կովերը՝ սարիև յերկու անգամ տվորականից շատ յեն կար սալիս, — աշնանը, յերբ նրանք ծնում յեն և շատ կաթ տալիս, մեկ ե՛լ՝ գարնանը, յերբ կովերին արոտատեղերն յեն քշում:

Ահա թե ինչու յեն գերմանացիներն ասում, վոր յերբ կովն աշնանն է ծնում, միելուց յեն քե կովը սարիև յերկու անգամ է ծնում:

Ուրեմն աշնանային ծննդաբերությունը գյուղացու տնտեսության համար շատ ոգտավետ է. աշնանը և ձմեռը, յերբ կաթը բարձր գնով է ծախվում, աշնանը հորթ բերած կովերը այնքան

կաթ յեն տալիս, ինչքան գարնանը՝ ամենալավ արոտներում կերակրվելով:

Ի՞նչպես անել, վոր կովերը աշնանը ծնեն: Ի հարկե մի անգամից այդ անել չի կարելի, բայց 2 կամ 3 տարում կարելի յե այնպես անել, վոր կովը աշնանը ծնի, և այդ միջոցով տնտեսությունը կարող ե շատ ոգուտ ստանալ:

Չպետք ե մոռանալ, վոր առողջ, կուշտ պահած կովի առաջին սերմնահոսությունը սովորաբար ծնելուց 25 կամ 28 որ անցնելուց հետո ե տեղի ունենում: Յեթե այդ ժամանակ կովը չբեղմնավորվի, ապա հետևյալ հոսումը միայն 3 կամ չորս շաբաթից հետո կլինի:

Ահա պետք ե աշխատել, վոր անպատճառ առաջին հոսման ժամանակ կովը բեղմնավորվի: Յեթե կովը փետրվարին ե հորթ ծնել, պետք ե աշխատել, վոր նա բեղմնավորվի մարտին, այդ դեպքում նա կծնի գեկտեմբերին: Անհրաժեշտ ե վոր նա բեղմնավորվի հունվարին, այն ժամանակ հետևյալ հորդածնությունը կլինի գեկտեմբերին: Յերկու տարուց հետո հեշտ կլինի այնպես անել, վոր կովերը հորթ բերեն աշնանը:

Պարզ ե ուրեմն, վոր կովերի աշնանային հորթածնության ամբողջ գաղտնիքն այս ե,— առաջին հոսման ժամանակը բաց չթողնել և աշխա-

տել, վոր այդ ժամանակը նա անպատճառ բեղմնավորվի:

Բայց վորպեսզի աշնանային հորթածնությունից ստանանք այն ոգուտը, ինչ վոր գերմանացիներն յեն ստանում, պետք ե մտածել և կովը լավ պահելու մասին, թե չե՞ ոգուտը քիչ կլինի:

Տախ գոմ յե՛վ տախ հորթաւնոց: Նախ և առաջ, աշնանային հորթածնության համար, պետք ե խնամք տանել, վոր տաք գոմ և տաք հորթանոց լինի: Տաք գոմը միայն նրա համար չե հարկավոր, վոր մենք կուգենայինք մեր տավարների հորթածնությունը աշնանը լիներ: Այժմ ամեն մի գյուղացի արդեն գիտի, վոր տաք գոմի շնորհիվ կերի մեծ խնայողություն ե լինում, վորովհետև տաք գոմում տավարը քիչ ե ուտում: Իսկ ցուրտ գոմում շատ կեր ե գնում միայն նրա համար, վոր կովի մարմինը տաքանա:

Բայց աշնանային հորթածնության ժամանակ տաք գոմը հարկավոր ե և նրա համար, վոր կովը հաջող ծնի և վոր հորթը ցրտից չվնասվի: Յե՛վ վորովհետև հորթին մոր մոտ թողնել չի կարելի, ուստի տաք հորթանոց ել ե հարկավոր, ուր ծնվելուց հետո կարելի լինի հորթը տանել:

Յերբ կովը գարնանն ե ծնում, գյուղացիները ցրտին հորթը խրճիթ յեն տանում և պահում յերեխաների հետ: Պետք ե թողնել այդ սո-

կերի ե պարտաւոր
հարկաւոր յե ինչ
հարկաւոր յե ինչ
հարկաւոր յե ինչ

վորութիւնը: Դա փնաս է—մանավանդ յերեխաների առողջութեանը:

Պետք է հոգալ, վոր գոմի դռներն ու լուսամուտը (յերթիկը) ամուր փակվեն, ճեղքեր չունենան. գոմի պատերը պետք է լավ սվաղած լինեն, վոր ցուրտ չանցնի: Գոմի վրա պետք է դեզը դարսել, և գոմը տաք կլինի:

Աշնանային հորքածնորդակ ժամանակ կոյիտի լայնի յեխ ըստ պետք է կերակրել: Յեթե աշնանը մենք միանգամից կովերին սկսենք այն կերը տալ, ինչ վոր գյուղացիները սովորաբար ձմեռն յեն տալիս, այն ժամանակ աշնանային հորթածնութիւնից ոգուտ քիչ կլինի. կար չի յիևի, հորթն էլ—փասուժ, յար կրիևի: Յեթե կովի կերը լավացնելու հնարավորութիւն չկա,—այն ժամանակ լավ է հին կարգը պահել:

Իսկ յեթե մենք հաստատապես վճուել յենք մեր գյուղատնտեսութիւնը բարձրացնել և այնպիսի հառաջադիմութիւնների հասցնել, վորպիսին մենք տեսնում յենք արտասահմանի գյուղացիների մոտ,—ապա հարկավոր է մտածել տավարի կերը բարվոքելու մասին: Յե՛վ առաջին նվագ արմատապտուղների (տակերի) և կարտոֆիլի մասին պետք է մտածել:

Ամենքը լավ գիտեն, թե ինչքան է պակասում կովի կաթը, յերբ արածելու տեղից նրան

11 1/2 7

գոմ յեն քշում և սկսում ձմեռվա կեր տալ: Սա քայն միջոց կա, նույնիսկ առանց աշնանային հորթածնութեան, աշնանն ու ձմեռը կաթը պահպանելու: Այդ միջոցը—արմատապտուղներն և կարտոֆիլն յեն:

Ի՞նչ է պատճառը, վոր արմատապտուղներով (սակերով) կերակրելիս կարք պահպանվում է: Դրա պատճառն այն է, վոր յերբ արածելու լավ տեղ է լինում, կաթը շատանում է: Գարնանը թարմ խոտ է, իսկ աշնանը հյութալից խոտի փոխարեն հյութալից տակեր յեն և կարտոֆիլ:

Յե՛վ, յեթե աշնանը կովերին արմատապտուղներ ու կարտոֆիլ տանք, կաթը չափազանց կավելանա:

Յեթե տնտեսութիւնը մի կով ունի,—նույնիսկ ազարակում կարելի յե նրա համար բավականաչափ արմատապտուղը ուսցնել,—տակն, գետնախնձոր (կարտոֆիլ) և այլն: Իսկ միայն դարմանով չարժե մինչև անգամ աշնանային հորթածնութեան անցնել,—վոչ մի ոգուտ չի լինի:

Ի՞նչպէս ւնել, վոր աշնանային հորքածնորդակը պահպանվի: Ահա մենք հասանք մեր ուզածին, և կովերը աշնանն յեն ծնում: Մեր կովերը սեպտեմբերին յեն ծնում: Բայց յեթե դրանից հետո կովը հոկտեմբերին բեղմնավորվի—նա կծնի հունիսին: Իսկ ապա յեթե նա հուլիսին

բեղմնավորվի, — հորթ կբերի մարտին, — ուրեմն կրկին կունենանք գարնանային հորթածնություն:

Բայց արշնանային հորթածնությունը միշտ պետք է պահպանել: Իսկ այդ շատ հեշտ է անել՝ յերկու-յերեք հոսումն բաց թողնելով: Այդ գեպքում շատ շահավետ կլինի այն մտքով, վոր կովի համար ել այդ ոգտակար է՝ յեթե յերկու-յերեք հոսումն բաց թողնենք: Այն ժամանակ կովը լիովին կվերականգնի իր առողջությունը:

Մոր արգանդում, մինչև ծնվելը, հորթը իր սնունդի համար քիչ ուժ չի խլում նրանից: Յեվ հղիանալուց առաջ մի այգալիսի ընդմիջումը — 2—3 ամիս — մեծ ոգուտ կտա:

Աշնանային հորթածնությունից տախարե ել ել շալակում: Ահա թե ինչու գիտնական անասնաբույժները կարծում են, վոր աշնանային հորթածնությամբ կարելի յե շատ լավացնել տավարը:

Յեվ իսկապես չպետք է մոռանալ, վոր աշնանային հորթածնությունը շատ շահավետ է տընտեսության համար, յերբ լավ, կաթնառատ կով ետ մեծացնում: Հորթերը ձմեռը լավ են խնամվում — պահվում և լավ կեր են ստանում: Առաջին ամառը նրանք խոտատեղերում են անց կացնում և տանն ել ավելի կուշտ կեր ստանում, իսկ յերկրորդ տարվա վերջին այնպիսի հաշվով են նրանց

բեղմնավորեցնում, վոր առաջին անգամ աշնան դեմը ծնի:

Գերմանացիները իրավացի յեն, յերբ ասում են, վոր բազմացան գետնի տված առատ կերի հետևանքով աշնանային հորթածնությունն այնպես է լավացրել նրանց անասունը, վոր ճանաչել չի լինի:

Յեվ այդ լիովին ուղիղ է: Գարնանային հորթածնությունից հետո հորթերը թուլակազմ, թերի դարգացած են արոտավայր գնում, իսկ յերկրորդ տարին նրանք արդեն հղի յեն լինում: Չե՞ վոր գյուղական նախիրներում բեղմնավորման համար մերձենալն ազատ է: Ամառը նախրում միշտ յեզ լինում է: Իհարկե այգալիսի պայմաններում յերինջներին շատ վաղաժամ բեղմնավորվելուց պահպանել չի հաջողվում:

Ուրեմն աշնանային հորթածնությունը մեր տավարը լավացնելու ամենահասարակ և հավաստի միջոցն է: Մենք ամենքս այժմ գիտենք, վոր մեր տավարը ամենևին այնպես վատ չե, ինչպես մենք սովորել ենք կարծել: Նա միայն վատ կերի, վատ պահելու պատճառով փչացված է: Յեվ այն գյուղացիների տնտեսություններում, ինչտեղ սկսել են կանոնավոր կերպով պահել ինամել տավարը, այնտեղ ամենակարճ ժամանակամիջոցում համոզվել են, վոր մեր տեղական

Handwritten signature or mark

տավարը կարելի յե շատ կաթնատու դարձնել:

Պե՛սք ե հոգա՛յ, վոր կո՛վի բեղմնավոր՝: Յերբ վոր յեզը նախրում ման ե գալիս, նրա ուժերը շատ անգամ ապարդյուն են անցնում և նրա սերմի խնայողութիւնն չի լինում: Այլ բան ե, յեթե նրան, բեղմնավորութեան համար, տերերն են քաշում կովի վրա:

Նախրում յեզը միևնույն կովի հետ մի հոսման ժամանակ մի քանի անգամ ե իզուր տեղը զուգավորվում: Հայտնի յե, վոր նախրում յեզը հազիվ հազ կարող ե մինչև 60 կովի հետ հաջող զուգավորվել:

Իսկ յերբ մարդիկ են յեզին կովի վրա քաշում, նա կարող ե զուգավորվել մինչև հարյուր զանազան կովերի հետ, և յեթե լավ պահեն — ել ավելի: Սակայն գյուղացիների տնտեսութիւններում յեզը անուժ ե լինում, հաճախ նա յեզ ել չի, այլ մի տարեկան յեզնիկ, իսկ ազատ զուգավորութեան ժամանակ կարգին յեզն ել անպետք կդառնա:

Տախարը կապած արածացնելը: Աշխարիս ամենալավ անասնապահները դանիացիներն են: Վաթսուն տարի առաջ այդ յերկիրը՝ Դանիան, մեր տավարներից մի քիչ լավ տավար ուներ: Իսկ այժմ Դանիան ամենաորինակելի անասնաբուծական յերկիրն ե համարվում:

Յեվ ահա Դանիայի գրեթե բոլոր գյուղացիները վաղուց արդեն թողել են նախիրով արածացնելը: Նրանք ասում են, թե տախարը նախրում այնքան խոտ չի ուտում, ինչքան վոսնահարում ե: Յեվ մեզանից ամեն մեկը շատ-շատ անգամ ե տեսել այդ բանը: Կովերն այնքան խոտ չեն ուտում, ինչքան վազվզում են ու խոտը կոխկռտում:

Ահա այդ պատճառով Դանիայի գյուղացիները վաղուց արդեն տավարը կապած են արածացնում: Յեվ բանից դուրս ե գալիս, վոր այդ ձևով արածացնելուց մեծամեծ ոգուտներ են ստացվում: Նախ և առաջ խոտատեղերը տարեց տարի ավելի և ավելի լավանում են: Չե վոր կովերը թե գարնան և թե աշնան սաստիկ փչացնում են արածալու տեղերը, թաց հողի մեջ վոտքերով փոսեր են փորում:

Յերկրորդ՝ կովերը կապած ավելի կուշտ են ուտում, վորովհետև մեկը մյուսին չեն խանգարում և հանգիստ կարող են արածել: Տավարը կապած արածացնելիս, դանիացիները սկսեցին կովերին այնպիսի հողաբաժիններում կերակրել, ուր հատկապես կերի խոտեր եյին ցանված: Անշուշտ, կովերը աննդարար խոտը ուտելուց հետո կաթը չափազանց ավելացրին: Իսկ այն տեղը, ուր կովերը արածել եյին, նրանք հերկում եյին:

առաջ հացահատիկներ ելին ցանում, կարտոֆիլ տնկում, իսկ ապա կերի խոտեր ցանում: Յեւզ գործը այնպես լավ գնաց, վոր Դանիայի գյուղացիները աշխարհիս ամենալավ անասնապահներն են համարվում:

Ի՞նչ ոգոս ե տալիս կապած արածացնելը: Յերբ վոր կովերը մի ընդհանուր նախրում են արածում, հաճախ ե պատահում, վոր նրանք մեկ մեկու վիրավորում են: Այնպիսի դեպքեր ել են յեղել, վոր մի կով մյուսի փորն ե պատռել: Մի՞թե քիչ կով ե հիվանդանում. հայտնի յե, թե ինչպես հաճախ կովերի շեռը արյունախառն ե լինում: Իսկ կապած արածելու ժամանակ այդ յերբեք չի կարող լինել:

Յերբ վոր կովը կապած ե արածում, նա ամենեին խոտը չի կոխոտում, ամբողջապես ուտում ե, մաքրազարդում: Կապած արածող կովի կաթը շատ ավելանում ե, և նա շատ լավ չաղանում ե:

Տավարը կապած արածացնելու համար առանձին սանձ ե հարկավոր շինել: Այդ սանձի ամբողջ եյությունը նրա մեջ ե, վոր յերբ անասունը սկսում ե պարանը քաշել, վորպեսզի թոկից ազատվի, սանձը սաստիկ հուպ ե տալիս նրա դունչը: Հենց վոր կենդանին տեսնում ե, վոր թոկը ցավեցնում ե— ել չի քաշում: Դրանից հե-

տո սանձը անմիջապես թուլանում ե: Մի գյուղասնտես ասում ե, թե կովերը մի կամ յերկու որից հետո ընտելանում են այդ սանձին և շատ լավ արածում: Ուրեմն միայն մի յերկու որ պետք ե նրանց լավ նայել, իսկ ապա առանձնապես նայելու կարիք չկա:

Ի՞նչպես պե՛սք ե շինել սանձը: Վերցնում են յերկու տախտակի կտոր՝ վեց վերջուկ յերկարությամբ, լայնությամբ՝ մի վերջուկից մի քիչ պակաս, իսկ հաստությունը կես վերջուկի չափ. այդ տախտակներից յուրաքանչյուրի մի ծայրին, լայնության վրա, յերկու կտոր ծակ են անում այնպիսի մեծությամբ, վոր նրանց միջով կարելի լինի բարակ, վոլորած թոկ անցկացնել:

Տախտակների մյուս ծայրերին մի մեծ, կտոր ծակ են բաց անում: Այդ ծակերից անց են կացնում պարանի ծայրը, վորով կապում են նրան և ծայրին ամուր և մեծ կշկիւ են անում: Այդ ծակի միջից կշկիւը պիտի չանցնի: Տախտակները բարակ թոկով են պնդացնում, վոր յերկտակ անց ե կացրած ականջների յետևից և տախտակների մեջտեղից ամրացրած: Յիցը շինվում ե շարժվող ողակով: Յցի յերկայնությունը 7 և կես վերջուկ ե, իսկ ողակի լայնությունը մոտավորապես յերկու վերջուկ:

Վորպեսզի արածելիս պարանը չկնճովի,

1007
33692

պետք ե պարանի մեջտեղում, կամ սանձին ավելի մոտ, յերկաթե պտուտիկ ամրացնել: Այդ պտուտիկը յերկու յերկաթե ողակներ են՝ միմյանց միացված: Յցի պտուտակի վերի մասի լայնությունը մոտավորապես 1 և կես վերջոկ ե, իսկ վարինը՝ մի վերջոկ:

Պարանի յերկայնությունը կարող ե լինել ինչքան ուզենաս, բայց կովերի համար խորհուրդ են տալիս 6 կամ ութ արշինից յերկայն պարան չվերցնել:

Կապած արածացնելիս կենդանիներին շարքով կանգնեցնում են արոտատեղի մի վորևե կողմում: Մոտեցնում են մի կով: Նրա պարանիցիցը արածելու տեղից այնպիսի հեռավորության վրա յեն խրում գետնին, վոր յերբ պարանը ձիգ քաշած լինի, կովը չկարողանա մեկ արշին լայնությամբ տարածությունից ավել արածել: Յիցը ուղիղ պետք ե խրել և վոչ թե ծուռ, գետնի մեջ պետք ե խրել մինչև ողակը: Յերկրորդ կովիցիցը այնպիսի տարածության վրա յեն խրում հողի մեջ, վոր նրանք միմյանց չխառնվեն:

Ինչքան վոր խոտը լավ ե, այնքան ել կովերին միմյանց մոտ են կանգնեցնում: Այդ դեպքում ավելի նեղ տարածություն պետք ե հատկացնել արածելու համար: Յերբ կովերը հանդարտ են և միմյանց սովոր, այդ դեպքում, յեթե լավ,

ուժեղ խոտ ե, նրանց միմյանցից միայն յերեք կամ չորս արշին հեռու յեն կանգնեցնում: Յեվ միմիայն կես արշին լայնությամբ տեղ են տալիս նրանց ուտելու: Այդ դեպքում նրանք խոտը ամբողջապես ուտում են, մաքրում:

Յերբ կովերը այդ նեղ արածության ամբողջ խոտը ուտում են, նրանց ուրիշ տեղ են տանում: Յիցը հանում են գետնից և կես արշին առաջ բերում ու նորից գետնին խրում: Ամեն մարդ ել կարող ե հասկանալ, թե վորքան շուտ շուտ պետք ե ցիցը հանել, ուրիշ տեղ խրել և կովին նոր տեղ տալ ուտելու:

Կովերի սանձը սկզբում բակումն են դնում, չվանը ձեռն առնում և արածելու տեղը տանում: Իսկ յերբ վոր կովերը ընտելանում են այդպես արածելուն, սանձը և պարանը վզով են փաթաթում և քշում:

Դերմանացիներն ել են կովերին կապած արածացնում: Դանիացիների որինակով նրանք մինչև անգամ ամբողջ նախիրներն են արածեցնում կապոտած: 50 կամ 60 կովի համար հերիք ե մի նախրչի, և նա համարձակ կկառավարի այդքան կով: Իսկ յեթե կապոտած 3—5 կով ե արածում, մի յերեխա յել բավական ե. պետք ե միայն յերբեմն յերբեմն կովերին նայել, և յեթե հնարավոր ե, նոր տեղ տանել,

Արդոյ առժե՞ հորդածնութեան կարգը փոխել:
Գյուղացին այս գիրքը կկարդա և մտածմունքի
մեջ կընկնի: Արժե՞ այդպիսի ջանջալ բան սկսել:
Յե՛վ տաք գոմ ե հարկավոր, և արմատապտուղ-
ներ պետք ե ցանել, կարտոֆիլ ել պետք ե շատ
տնկել, և սննդարար կերեր ել պետք ե ձմեռվա
համար գնել: Ինչքա՞ն բան ե հարկավոր...

Բայց այդ հարցը վճռելու համար պետք ե
հաշվել և այն ոգուտը, վոր կարելի յե աշնանա-
նային հորթածնությունից ունենալ:

Այն որից, յերբ կովերը գոմ են մտնում
ձմեռվա կեր ուտելու, գյուղում մեծ պաս ե
սկսվում. համարյա թե կաթ չի լինում: Իսկ աշ-
նանային հորթածնության դեպքում գյուղացու
ընտանիքը կուշտ կլինի և ծախելու յել շատ
կաթ կմնա:

Յե՛վ աշնանը կաթի գինը միշտ ավելի բարձր
ե լինում, քան թե գարնանը: Համարձակ կարե-
լի յե ասել, վոր աշնանը կաթը կհանի այն բո-
լոր ծախսերը, վոր գյուղացին պիտի անի կո-
վերին աշնանային հորթածնության փոխելու
դեպքում:

Ինչտեղ թարմ կաթը ծախել չի կարելի, այն-
տեղ ծախսերը կհանի յուղը: Յյուղի գինն ել
ձմեռը բարձր ե լինում:

Սակայն ոգուտը միայն այդ չե. գերմանա-

ցիներն ասում են, վոր յեթե կովը աշնանն ե
ծնում, նա շատ ավելի առողջ ե լինում: Հենց
այդպես ել պետք ե լինի. տնտեսության մեջ
աշնանը կեր շատ ե լինում, կովերն ավելի կուշտ
են լինում, և հաջող ծնում:

Նրանց մոտ չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր
կովը ծնելուց հետո աշնանը անպետքանա, իսկ
գարնանային հորթածնության ժամանակ քաղ-
ցած կովերը շատ հաճախ են անպետքանում և
նրանց առողջացնելը շատ դժվար ե լինում:

Բայց աշնանային հորթածնության ոգուտը
միայն այդ չի: Աշնանային հորթերը ավելի
լավ յեն կաթով սնվում, իսկ դրա շնորհիվ տա-
րեց տարի տավարը լավանում ե: Յե՛վ գերմա-
նացիները, մանավանդ դանիացի գյուղացիները
հաստատ համոզված յեն, վոր մտամբ աշնանա-
յին հորթածնության շնորհիվ յեն բարվոքել իրենց
անասունը:

Գերմանացիները գուր տեղը չեն հանաքով
ասում, վոր, յեթե կովը աշնանն ե ծնում, եղ
նշանակում ե, վոր նա տարին յերկու անգամ ե
ծնում:

Մասդաջ հորթը ցանել ժամանակից սրահայա-
նի: Ամեն մի գյուղացի այդ կանոնը շատ լավ
գիտե: Յեթե հավի ճուտը, խոզի գոշին, հոր-
թուկը, հենց նույնիսկ յերեխային կյանքի առա-

Ղին որից քաղցած պահեստ,—նրանցից շատ քիչ ոգուտ կլինի:

Իսկ յեթե կովը աշնանը ծնի, գեղՂկուհին միշտ ավելի շատ ժամանակ կունենա հորթուկին նայելու: Բացի դրանից աշնանը նրանց այնքան ել կաթ հարկավոր չի. աշնանը նրանք քիչ յեն աշխատում, ուրեմն ենքան ել շատ չեն ուտում, ինչքան գարնանը՝ գործի ամենաթուկ ժամանակը: Ուրեմն կարելի կլինի հորթին շատ կաթ տալ:

Իսկ արմատապտուղներ և կարտոֆիլ բուսցնելու ավելորդ աշխատանքը հարյուրապատիկ կծածկվի: Ամեն մեկը թո՛ղ լավ հատկանա, թե արմատապտուղներն ու կարտոֆիլը վորպիսի ոգուտ յեն սաշխ:

Յեթե հողը լավ է պարարտացրած—որինակ, կարտոֆիլ ցանելն ավելի ոգուտ է, քան վորևե հացահատիկ ցանելը:

Աշնանային հորթածնության անցեք, և զբանով ստիպեցեք, վոր ձեր կովերն ել տարին յերկու անգամ ծնեն:

ԻՌՐԶԻԴ. ՍՈՑ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

- Ի. ՍՏՈՒԻՆ.—Գյուղացիական հարց: Գիներ 50 կոպ.
- Ի. ՍՏՈՒԻՆ.—Ազգային հարց: (Տպագրվում է):
- Վ. ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիսասարդության. գիներ 15 կ.
- Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ.—Մեր առաջին բանվ.—գյուղ. հեղափոխությունը. Գիներ 70 կ.
- Ն. ԿՐՈՒՊՍԿԻՅԱ.—Լենինի պատգամները ժողովրդական լուսավորության մասին: Գիներ 20 կ.
- Լ.Ս.ՎՐԵՆՏՅԵՎ.—Ինչպես աշխուժացնել խորհուրդները.
- Զ. ՅԱՎՈՐՍԿԻՅԱ.—Կլարա Յեկին (կենսագր.): Գիներ 10 կ.
- Ն. ՏՅՈՒՐՅԱԿՈՒՆՈՎ.—Ազգ. հարցը յե՛վ դպրոցը: գ. 40 կ.:
- Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտությունը 1 աստիճանի դպրոցում: գիներ 65 կ.
- Ն. ՅԵԼԻՉԵՐՈՎ.—Ի՞նչ վորոշեց կուս. XIV համագ. 112 էջ, գ. 30 կ.:
- Ա. ԳՄԻՏՐՅԵՎԱ.—Տգիտությունը յե՛վ սնահավասությունը: Գիներ 15 կ.
- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ.—Գյուղատնտեսական հարկ: Գիներ 20 կ.
- ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիության պահանջները յե՛վ խորհրդային դպրոցի ծրագրերը: Գիներ 12 կոպ.
- Պ. ՎԼԱՍՈՎ.—Հողի մեակումը յերաժեի ժամանակ: Գիներ 40 կոպ.
- Լ. ՅՈՉԵՖՈՎԻՉ.—Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոոպերացիան գյուղում): Գիներ 30 կոպ.
- Ի. ՊՈՂՅԱՊՈՒՍԿԻ.—Աստու կառնը բե՞ գյուղատնտեսական գիտությունը: գիներ 20 կ.
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ.—Թե ինչպես կարելի յե գյուղում ելի՜քսականությունն անցկացնել: Գիներ 15 կ.
- Պ. ԼԻՍՈՎ.—Խոզը գյուղացիների կերակրողն է:
- Ն. ԲՐԱՆԻՆ.—Թե ինչպես գերմանացիին սխիպեց, վոր կովը տարին յերկու անգամ ծնի.
- Ա. ՍԿՈՄՈՐՈՒՆՈՎ.—Ինչպես ընտել կարնատու կով:
- Ա. ՍԿՈՄՈՐՈՒՆՈՎ.—Առաջին ոգևությունը հիվ. կենդանուն, գ. 17 կ.

- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները: Գիներ 17 կ.
- Ն. ՍԵՄՇԿՈ.—Փոխախ. (պակեբրազարդ): Գիներ 25 կ.
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխաների վարակիչ հիվանդությունները. գ. 30 կ.
- Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր. Գիներ 25 կ.
- Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ.—Մոր այբբենաբանը. (պակե):
- Ն. ՍԵՄՇԿՈ.—Արեվը, նրա վորդիները լեվ բունները: (Տպ.):
- Վ. ՅԱԶՎԻՅԿԻՅ.—Մարդկային բնակարանի պատմությունը: Գիներ 15 կ.
- Գ. ԳՐԱՎԵ.—Ինչպես է սարված սիլեզերը. (սպագր.).
- ԳՐԵՄՅԱՅԿԻՅ.—Վորոս, կայծակ լեվ ելեհրականություն (սպագրվ.):
- Ա.ԳՈՒ.—Կենդանիների լեվ մարդու ծագումը: (սպագր.):
- Մ. ԳՈՐԿԻՅ.—Յերիսասարդ գրողը: Մարդը: Գիներ 15 կ.
- Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ.—Պատմաբաններ: (սպագր.)
- Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ.—Մոծակի լեվ արջի մասին: (Պատկեր.), գ. 15 կ.
- Պ. ՈՐԼՈՎՆՅ.—Ճամբորդություն այբրուպանով: (Պատկ.), Գիներ 22 կ.
- Պ. ՈՐԼՈՎՆՅ.—Քիմիկոս Կուզկան: (Պատկերագր): Գիներ 28 կոպ:
- Ա. ԿՈՒՊՐԻՆ.—Յերկրի խորքերում: (Պատկերագր): Գիներ 15 կոպ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպես էլին ապրում սիկնիկները լեվ ինչ արեց արհիևե զինվորը: (Պատկ.): Գիներ 16 կ.:
- Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ.— Ինչպես Սաֆոն կարմիր բանակային դարձավ: գ. 35 կ.
- Ֆ. ՖՈՔՍ.—Միևիստ մեկ ժամով: (Պատկերագր): Գիներ 18 կոպեկ:
- ՅԵ. ՌԱԳԻՆ.—Պիոներ, պահպանիր առողջությունը: Գիներ 10 կոպեկ:
- ՌԻՃՈՎ.—Պատանի պիոներ: (Ժողովածու):
- Պ. ԽԵՆՆԻԿՈՎ.—Կարմրամորթները: զինը 45 կ.

Գիմել՝ Москва, Никольская 10, Центриздату.
Կամ՝ Յերեվան Հայաստանի Պետհրատին:

«Ազգային գրադարան»



NL0298141

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

22.015



И. Брауде

**Как немец заставил
корову телиться
два раза в год**

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С С Р

Москва

Никольская 10.